



ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ
 Հատոր 2, համար 2, 2008թ.



www.ysmu.am

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՔԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՏԱ-
 ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՔԵՐԸ**

Համբարձումյան Ա. Ձ., Հարությունյան Կ. Է.

Երևանի Մ. Հերացու անվ. պետ. բժշկական համալսարանի համաճարակաբանության
 ամբիոն, Երևան, Հայաստան

ԱՅԿ -ն, իր կառուցվածքի մեջ մտնող պետություններին, կոչ արեց մոնիտորինգում,
 բոլորի համար առողջության նվաճումների ռազմավարության գնահատականում, ավելի
 լայն օգտագործել համաճարակային տվյալներն ու մեթոդները:

Համաճարակային մոտեցման կիրառումը՝ սոմատիկ հիվանդությունների ուսումնասիրության
 և դրանց կանխարգելման մեթոդների մշակման ժամանակ, հանգեցրին
 «Համաճարակաբանությունը ոչ ինֆեկցոն հիվանդություններ» հասկացողության
 առաջացման: Ձևավորվեց հետազոտությունների երկու ուղղություններ՝
 համաճարակաբանությունը ինֆեկցիոն հիվանդություններ և համաճարակաբանությունը
 սոմատիկ հիվանդություններ:

Ժամանակակից Էտապում ինֆեկցիոն հիվանդությունների հիվանդացությունների
 մակարդակի բարձրացմանը նպաստում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են
 հասարակության կտրուկ շերտավորումը և հասարակության անպաշտպան խմբերի
 սոցիալական կյանքի մակարդակի իջեցումը, առանց հսկողության ներգաղթի
 ակտիվացումը:

Հակակենսառեզինստենտային հարուցիչների մոնիտորինգը դառնում է բուժական և
 կանխարգելիչ միջոցառումների անբաժանելի մասը: Հատուկ արդիականություն են վայելում
 հոսպիտալային ինֆեկցիաները, որոնք դարձել են աշխարհում առողջապահության
 հիմնական հիմնախնդիրներից մեկը՝ ինչպես զարգացող, այնպես էլ բարձր զարգացող
 երկրների համար: Ակնհայտ է, որ ժամանակակից Էտապում համաճարակաբանությունը
 ձեռք է բերել նոր գծեր, պայմանավորված համաճարակային իրավիճակների բարդացման
 հետ, նաև ինֆեկցիոն հիվանդությունների հետ, միաժամանակ շատ սոմատիկ
 հիվանդությունների համաճարակային տարածվածության հետ: